ԱՂՈԹՔ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԺԱՄԱՆԱԿ

Խոսեք ձեր ընտանիքի հետ այն մասին, թե ինչ անել արտակարգ իրավիճակներում:

Նոել Բարուս
(Հիմնված է իրական պատմության վրա)

Վիոլետը քնած էր, երբ մի դղրդյուն արթնացրեց նրան: Սկզբում նա մտածեց, որ որոտ է:

Բայց դղրդյունն ավելի ու ավելի ուժեղացավ: Նրա ննջասենյակի պատուհանները ցնցվեցին:

Վիոլետը արագ նստեց: Երկրաշա՛րժ էր:

Նա իր ընտանիքի հետ ոչ վաղ անցյալում տեղափոխվել էր Պերու: Նա գիտեր, որ այստեղ հաճախ երկրաշարժեր են տեղի ունենում: Նա և իր ընտանիքը պատրաստվել էին դրանց համար և սովորել էին, թե ինչ անել: Բայց սա շատ ավելի սարսափելի էր, քան նա կարծում էր: Նա զգում էր, որ մարմինը ցնցվում է:

Վիոլետը վազեց խոհանոց և սողաց սեղանի տակ: Մի քանի վայրկյան անց նրան միացան եղբայրն ու քույրը: Մայրիկն ու հայրիկը նույնպես:

«Լավ է, որ հիշում ենք, թե ինչ ենք պարապել», - ասաց հայրիկը: «Բոլորը լա՞վ են»:

Վիոլետի եղբայրն ու քույրը գլխով արեցին:

Բայց Վիոլետը վախեցած էր: Նա փակեց աչքերը: Դժվար էր անտեսել իր շուրջը եղած ցնցումները:

Հետո Վիոլետը հիշեց աղոթքի մասին: Նա ձեռքերը ծալեց և գլուխը խոնարհեց: «Սիրելի Երկնային Հայր», - շշնջաց նա, «խնդրում եմ հոգ տանել իմ ընտանիքի մասին»:

Վիոլետը շարունակեց աղոթել: Նա այնպիսի զգացողություն ունեցավ, ասես ինչ-որ մեկը ամուր գրկում է իրեն: Երբ նա ավարտեց, նայեց վեր: Մայրիկն ու հայրիկը ձեռքերը ծալել էին: Նրա եղբայրն ու քույրը նույնպես ծալեցին ձեռքերը: Նրանք բոլորն աղոթում էին: Գետինը դեռ ցնցվում էր: Բայց Վիոլետը խաղաղություն էր զգում իր սրտում և մտքում:

Վերջապես ցնցումը դադարեց: Վիոլետն ու իր ընտանիքը մի քիչ էլ մնացին սեղանի տակ, միայն թե ապահով լինեին:

«Ինչպե՞ս ես»: Մայրիկը հարցրեց Վիոլետին:

«Լավ եմ», - ասաց Վիոլետը: «Սկզբում ես իսկապես վախենում էի: Բայց աղոթելը օգնեց ինձ ավելի լավ զգալ»: Նա գրկեց մայրիկին: Նա ուրախ էր, որ Երկնային Հայրն օգնեց իրեն խաղաղություն զգալ: ●

Այս պատմությունը տեղի է ունեցել Պերուում:

ԱՌԱՐԿԵԼԻ ՊՈՂՈՍՅԱՆԸ